Հավելված N 52
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
նախարարության գլխավոր քարտուղարի
2025 թվականի սեպտեմբերի 25-ի N 745-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԻ ԵՎ ՓՈՍՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՊԻ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1) Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ **Նախարարություն**) կապի և փոստի վարչության (այսուհետ՝ **Վարչություն**) կապի բաժնի (այսուհետ՝ **Բաժին**) ավագ մասնագետ (ծածկագիր՝ 24-32.3-Մ5-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից կամ ավագ մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

ՀՀ, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ. Սարգսյան 3/3

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) մասնակցում է կապի (այդ թվում՝ տիեզերական և ինտերնետ) ոլորտի զարգացման, ինչպես նաև ՀՀ-ում էլեկտրոնային հաղորդակցության համընդհանուր ծառայությունների մատուցման քաղաքականության պետական ծրագրերի ու միջոցառումների մշակման և դրանց իրականացման մոնիթորինգի աշխատանքներին.
2) մասնակցում է կապի և հեռահաղորդակցության ենթակառուցվածքների զարգացմանը, տարածմանը, ինչպես նաև միջազգային կապակցվածության խթանմանն ուղղված քաղաքականության և ռազմավարության, տեխնիկական և անվտանգության պահանջների, օրենսդրական կարգավորումների ու դրանցից բխող միջոցառումների մշակման աշխատանքներին.
3) մասնակցում է Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերով սահմանված՝ կապի (այդ թվում՝ տիեզերական և ինտերնետ) ոլորտին առնչվող հանձնառությունների իրականացման աշխատանքներին.
4) մասնակցում է կապի (այդ թվում՝ տիեզերական և ինտերնետ) ոլորտի իրավական և տեխնիկական ակտերի մշակման աշխատանքները, ինչպես նաև ստանդարտների մշակման աշխատանքներին.
5) մասնակցում է կապի օբյեկտների, պասիվ ենթակառուցվածքների ու դրանց պաշտպանական գոտիների հողերի օգտագործման սահմանափակումների և նորմերի մշակման ու ընդունման

աշխատանքներին.

6) մասնակցում է կապի (այդ թվում՝ տիեզերական և ինտերնետ) ոլորտում ՀՀ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) նախագծերի նախապատրաստման, կնքման, ինչպես նաև ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման աշխատանքներին.
7) մասնակցում է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերի՝ կապի (այդ թվում՝ տիեզերական և ինտերնետ) ոլորտին վերաբերող բաժինների մշակման աշխատանքներին.
8) մասնակցում է Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից Հայաստանի Հանրապետությանը պլանով հատկացված կապի (այդ թվում՝ ինտերնետի) արբանյակների ուղեծրային դիրքերի և հաճախականային շերտերի օգտագործման կառավարման և համակարգման աշխատանքներին.
9) մասնակցում է ռադիոալեհավաք կառույցների շինարարության, ներկման և լուսավորման վերաբերյալ կանոնների մշակման աշխատանքներին.
10) իր իրավասության սահմաններում մասնակցում է պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ենթակա մարմինների և պետական հիմնարկների կառավարման աշխատանքներին.
11) մասնակցում է կապի (այդ թվում՝ տիեզերական և ինտերնետ) և հեռահաղորդակցության ոլորտի տվյալ բյուջետային տարվա ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում պահանջող ծրագրերի վերաբերյալ ծրագրային բյուջետավորման ձևաչափով ներկայացված առաջարկությունների կատարման ու արդյունքային ցուցանիշների ապահովման աշխատանքներին.
12) մասնակցում է կապի (այդ թվում՝ ինտերնետի) ոլորտի զարգացման պետական ծրագրերի ու միջոցառումների մշակման, դրանց իրագործման ապահովման և մոնիթորինգի իրականացման աշխատանքներին.
13) մասնակցում է միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից ֆինանսավորման հավակնող կապի ոլորտի վերաբերյալ ծրագրերի ընտրության աշխատանքներին.

Իրավունքները՝

1) Ստանալ կապի (այդ թվում՝ տիեզերական և ինտերնետ) ոլորտի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի մշակման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերի՝ կապի (այդ թվում՝ տիեզերական և ինտերնետ) ոլորտին վերաբերող բաժինների մշակման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր.
2) Քաղաքացիներից ստացված կապի (այդ թվում՝ տիեզերական և ինտերնետ) ոլորտին վերաբերող դիմում-բողոքներին համապատասխան ընթացք տալուն նպատակով՝ համագործակցել համապատասխան մարմինների հետ.
3) Ներկայացնել առաջարկություններ կապի ոլորտի զարգացման պետական ծրագրերի ու միջոցառումների մշակման վերաբերյալ.

Պարտականությունները՝

1) Ուսումնասիրել կապի (այդ թվում՝ տիեզերական և ինտերնետ) ոլորտի զարգացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հաղորդակցության համընդհանուր ծառայությունների մատուցման քաղաքականության ծրագրերը.
2) Ուսումնասիրել կապի (այդ թվում՝ տիեզերական և ինտերնետ) և հեռահաղորդակցության ենթակառուցվածքների զարգացմանը, տարածմանը, ինչպես նաև միջազգային

կապակցվածության խթանմանն ուղղված քաղաքականության և ռազմավարության, տեխնիկական և անվտանգության պահանջների, օրենսդրական կարգավորումների ու դրանցից բխող միջոցառումների մշակման և իրականացման աշխատանքները և առաջարկություն նորկայացնել բաժնի պետին.

3) Ուսումնասիրել կապի օբյեկտների, պասիվ ենթակառուցվածքների ու դրանց պաշտպանական գոտիների հողերի օգտագործման սահմանափակումների և նորմերի մշակման ու ընդունման աշխատանքները և առաջարկություն նորկայացնել բաժնի պետին.
4) Աջակցել կապի (այդ թվում՝ տիեզերական և ինտերնետ) ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) նախագծերի նախապատրաստման աշխատանքներին.
5) Ուսումնասիրել կապի ոլորտի յուրաքանչյուր բյուջետային տարվա ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում պահանջող ծրագրերի վերաբերյալ ծրագրային բյուջետավորման ձևաչափով ներկայացված առաջարկությունները, կատարել դրանք ու ներկայացնել արդյունքային ցուցանիշները.
6) Ներկայացնել ռադիոհաճախականությունների տիրույթի բաշխման, օգտագործման որոշակի նպատակների համար ռադիոհաճախականությունների տիրույթի որոշակի հատվածների առանձնացման վերաբերյալ առաջարկություններ.
7) Ուսումնասիրել ՀՀ կողմից արտաքին առևտրի դեպքում սահմանափակումների ենթակա ռադիոէլեկտրոնային և (կամ) քաղաքացիական օգտագործման բարձր հաճախականության սարքերի, այդ թվում՝ ներկառուցված կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնող սարքերի ներմուծման և լիցենզավորման գործընթացի հետ կապված աշխատանքները,
8) Աջակցել ռադիոալեհավաք կառույցների շինարարության, ներկման և լուսավորման վերաբերյալ կանոնների մշակման աշխատանքներին,
9) Աջակցել կապի (այդ թվում՝ տիեզերական և ինտերնետ) ոլորտին վերաբերող բաժինների ՀՀ սոցիալ-տնտեսական ծրագրերի մշակման աշխատանքներին,
10) Աջակցել կապի (այդ թվում՝ ինտերնետի) ոլորտի զարգացման պետական ծրագրերի ու միջոցառումների մշակման, դրանց իրագործման և մոնիթորինգի իրականացման աշխատանքներին.

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ճարտարագիտության կամ տնտեսագիտության բնագավառներում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիներ՝

1. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
2. Ժամանակի կառավարում
3. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. <u>Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը</u>

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և մասնագիտական օժանդակության համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին աջակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացմանն օժանդակության շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև այլ համապատասխան մարմինների ներկայացուցիչների հետ ընդգրկվում է տվյալ մարմնի ներսում ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն: